Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմումների,

բողոքների 2014թ.-ի ինն ամիսների ամփոփագիր

2014թ-ի ինն ամիսների ընթացքում ստացվել է 757 դիմում:

ա) Դրամական օգնություն է խնդրել 515 քաղաքացի: Դրական պատասխան է ստացել 500-ը, մերժվել՝ 4-ը, ընթացքի մեջ է 11 դիմում: (Դրամական օգնության դիմումները մերժվել են հիմնականում կրկնակի լինելու կամ ընթացիկ եռամսյակում օգնություն ստացած լինելու հիմքով):

բ) Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 44 քաղաքացի, որից 24-ի խնդրանքը բավարարվել է, 12-ը՝ մերժվել, 8 դիմում ընթացքի մեջ է: (Բնակարանային պահանջի դիմումները մերժվել են մարզպետարանի իրավասությունից դուրս լինելու պատճառով):

գ) Առողջապահական բնույթի 73 դիմումից դրական պատասխան է ստացել 63-ը, մերժվել է՝ 7-ը, 3 դիմում ընթացքի մեջ է: (Առողջապահական հարցերով դիմած քաղաքացիները մերժվել են պետ. պատվերի և առողջարանային ուղեգրերի սահմանափակ լինելու պատճառով):

դ) Աշխատանքի հարցերով դիմած 14 քաղաքացիներից 7-ի պահանջին դրական ընթացք է տրվել, 7 դիմում մերժվել է, (դիմումները մերժվել են աշխատատեղ չլինելու պատճառով):

ե) Գյուղատնտեսական հարցերով դիմած 12 քաղաքացիներից 11-ը ստացել են դրական պատասխան, 1 դիմում ընթացքի մեջ է:

զ) Կրթության և մանկական հիմնարկներին առնչվող հարցերով դիմել է 36 քաղաքացի և բոլորն էլ ստացել են դրական պատասխան:

է) Հողաշինության հարցերով դիմած 16 քաղաքացիներից 13-ը ստացել են դրական պատասխան, 3 դիմում ընթացքի մեջ է:

ը) Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 46 քաղաքացի և ստացել դրական պատասխան:

թ) Այլ բնույթի 1 դիմում է հաշվառման վերցված, որին տրվել է դրական պատասխան:

ժ) Սեփականաշնորհման բնույթի դիմումներ ներկայացրած քաղաքացիներին առաջարկվել է դիմել դատարան:

Փ. Ղազարյան

մարզպետարանի աշխատակազմի

քարտուղարության ընդհանուր բաժնի պետ